ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
« » 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-225-15.12.2017-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 29 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-225-15.12.2017-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:»:

Այսինքն, նշված հոդվածի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը գնումների բողոքարկման խորհրդի որոշումների ուժի մեջ մտնելու կարգ և պայմաններ իրավացիորեն չի սահմանում՝ նկատի ունենալով, որ օրինական ուժը բացառապես դատական ակտերին բնորոշ իրավական որոշակիության արտահայտումն է: Մտնելով օրինական ուժի մեջ՝ դատական ակտը ձեռք է բերում օրենքի ուժ, կողմերի համար դառնում է «մասնավոր օրենք», պետական հարկադրանքի ուժով ապահովված խիստ որոշակի վարքագծի կոնկրետ կանոններ սահմանող անհատական իրավական ակտ, որը, ընդհանուր կանոնի համաձայն, չի կարող վերանայվել ո՛չ այն կայացնող դատարանի և ո՛չ էլ վերադաս ատյանների կողմից:

Տվյալ դեպքում օրենքով կարող է նախատեսվել ոչ թե խորհրդի որոշումներն ուժի մեջ մտնելու, այլ դրանց իրավապարտադիր դառնալու ժամկետներ:

Միաժամանակ գտնում ենք, որ եթե մասնակիցը համաձայն չէ խորհրդի կողմից կայացված որոշման հետ, ապա վերջինս ունի այն դատական կարգով բողոքարկելու իրավունք և դրա շրջանակում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող է միջնորդել դատարանին կիրառելու հայցի ապահովման միջոց՝ մինչև դատարանի կողմից կայացվող որոշումն ուժի մեջ մտնելը կասեցնել ցուցակում ներառելու մասին խորհրդի որոշումը:

Պետք է նկատի ունենալ նաև, որ նախագծի ընդունման պարագայում՝

1) ոչ պատշաճ վարքագիծ դրսևորած մասնակիցները հնարավորություն կստանան մինչև խորհրդի կողմից կայացված որոշման ուժի մեջ մտնելը մասնակցելու այլ գնման գործընթացների ևս: Ընդ որում, գործող օրենսդրությամբ նախատեսված են մեխանիզմներ, որոնք հնարավորինս ապահովել են ոչ խտրական մոտեցման կիրառում մասնակիցների հայտերի գնահատման նկատմամբ: Մասնավորապես, եթե մասնակիցը հայտով թերի է ներկայացնում պահանջված փաստաթղթերը, ապա վերջինիս հնարավորություն է տրվում շտկել դրանք: Այսինքն, եթե պատշաճ մասնակից է, ապա օրենսդրությունը երաշխավորում է նրա ներկայացրած հայտի՝ ձևական պահանջների չպահպանման արդյունքում հայտի չմերժելը և սև ցուցակում չներառումը.

2) անհարկի կձգձգվեն գնման գործընթացները և գործնականում կարող է ստեղծվել մի վիճակ, երբ պատվիրատուները հնարավորություն չեն ստանա ապահովել իրենց առջև դրված ծրագրային խնդիրների իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող լրացումները տեղին չեն և անընդունելի են:

Այդուհանդերձ, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

1) նկատի ունենալով, որ նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներով կատարվող լրացումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միևնույն՝ 46-րդ հոդվածում, դրանք անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածի ներքո.

2) նախագծի 2-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն» բառերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2018 թվականի N 29 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-225-15.12.2017-ՏՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. հունվարի 19
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-225-15.12.2017-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 46-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով՝

«3.1. Խորհուրդի կողմից ընդունված սույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո»:

Հոդված 2. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի 46-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3.2 մասով՝

«3.2 Խորհուրդի կողմից ընդունված սույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումների դեմ բողոք կարող է տարվել դատարան, մինչեւ այդ որոշումների ուժի մեջ մտնելը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է գնումների ոլորտում առկա խնդրի կարգավորմամբ, մասնակիցների կողմից գնումների բողոքարկման խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման դեմ դատական կարգով բողոք ներկայացնելու իրավունքի ապահովման, ինչպես նաեւ այդ իրավունքից օգտվելու դեպքում վերջիններիս համար անբարենպաստ հետեւանքների առաջացումը կանխելուն ուղղված անհրաժեշտությամբ:

Ներկայումս Օրենքը չի նախատեսում Խորհրդի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ, արդյունքում՝ պրակտիկայում այն օրինական ուժ է ստանում անմիջապես հրապարակվելու պահից /Այս փաստը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից իմ հարցմանն ի պատասխան/:

Անմիջապես ուժի մեջ մտած որոշումը որոշակի ժամկետով սահմանափակում է մասնակցի՝ այլ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունքը անկախ այն հանգամանքից, թե մասնակցի կողմից այդ որոշումը բողոքարկվում է դատական կարգով, թե ոչ: Մասնակցի կողմից Խորհրդի որոշումը դատական կարգով բողոքարկելու արդյունքում կարող է այն վերացվել, մինչդեռ նման իրավակարգավորման պայմաններում մինչ մասնակիցը կկարողանա վերականգնել իր խախտված իրավունքը, վերջինս կկրի վնասներ՝ բողոքարկման ընթացքում այլ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունենալու հետեւանքով:

Օրենքի նախագիծը սահմանում է այն ժամանակահատվածը, որի ավարտից հետո միայն Խորհրդի որոշումը ուժ կստանա, իսկ մինչ այդ ժամանակահատվածի ավարտը մասնակիցը կկարողանա բողոքարկել այն դատական կարգով: Այլ կերպ ասած Խորհրդի որոշումը անմիջապես իր ազդեցությունը չի ունենա մասնակցի վրա, քանի դեռ վերջինս օգտվում է իր դատական պաշտպանության իրավունքից եւ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: